

շարդրեցեալք բառիւն հայկականաւ: Աշխատութիւն Տն Յօնանու վարդապետին թօխաթեցւոյ, եւ Եպիսկոպոսին, ի զբօսանս եւ ի զուարճութիւնս հոգեկանս. եղբարց մերոց հայկազունեացն... ի հայրապետուն Տն Կարապետի ամենից հայոց Կաթողիկոսի. Յամի Տն 1727 Յուլի 24: Ի Վենետիկ. Ի Տպարանի Անթօնի Պօռթօլի. Հրամանաւ Մեծաւորաց, եւ Փռիկիէճիոզ Գերազանցագունեղի Ծերակուտի:»

Մեծ. տպ. 6X:1<sup>1</sup>/<sub>2</sub>, էջ 1—429:

Սոյն հինգ տպագրութիւններէն զատ՝ Յովնան Եպոս. պիտի ունենայ անշուշտ ուրիշ գործեր ալ՝ ձեռագիր մնացած: Այսպէս կը թելագրէ կարծել Յովնան Եպ.ի մէկ ինքնագիր աշխատութիւնն (1912ին Արդուինէն մեր Մատենադարան բերուած Հ. Ն. Ակինեանի ձեռօք), 1723ին ի վենետիկ Ս. Ղազար գրուած՝ նոյն տարին Մայիսի մէջ աւարտած: Ճակատը տեղ տեղ անընթեռնի: Ահա համառօտութիւնը՝

Գիրք պատմուեց Հրաշայեացն Աստուծոյ առ հոգիս քաւարանին: Հաւաքեցեալ յեկեղեցական պատմութիւց եւ ի գրեանց սրբոց վարդապետաց, եւ ի միտուփ շարագրեցեալ, ներգ... թեամբ վարդապետին գաւլո զրիգորն... սիյնեօլ, որ ի կարգէ յիսուսեանց, եւ թագմանեցեալ ի դաղմատականէ լեզուէ ի հայկական բարբառ շարդրեցեալ ի Յօնանէ Եպ.է թօխաթեցւոյ ի փառս Աստուծոյ. յամի ներմարմնուն Տեառն 1723. եւ ըստ թուոյ հայոց ռճ՛՛բ. ի մենաստանոջ սրբոյն զազարու հայոց ի վենետիկ:

Մեծ. գրուէ 47+9 սմ., էջք շնչանակեալ 36+1—330:

Էջ բ. «Բան առ Ս.ն Գրիգոր Լուսաւորիչն: Քեզ, ով հայր ամենապայծառ եւ հոգեւոր ծնող մեր գորովագութ ի Քն Յն ընծայեալ մատուցանեմ զաշ-